ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2020/02/02

«18» փետրվարի 2020թ.

ք. Երևան

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրեն Մ.Միլիտոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Գևորգ Գավրուշի Հակոբյանը, այսուհետ՝«Կատարող», մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է և վճարում, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել պայմանագրի 1.2 կետում նշված աշխատանքները, այսուհետ «Աշխատանք»:

1.2. Աշխատանքը բաղկացած է.
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց » ՓԲ ընկերության Գորիս տարածքային բաժնի Կատարիի հեռուստակայանի մերձատար ճանապարհի անցանելիության ապահովում սեփական տրակտորով (Վկայական N001397): Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ դիզելային վառելիքը ապահովում է Կատարողը:

1.3. Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում է 2020 թվականի փետրվարի 18-ից 20-ը:

1.4. Աշխատանքը Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում կատարողական ակտով:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Աշխատանքի կատարման համար պայմանագրային գին է սահմանվում 136.000 /հարյուր երեսունվեց հազար/ ՀՀ դրամ:

2.2. Վճարումը կատարվում է կանխիկ, Աշխատանքի ավարտից և կատարողական ակտի ստորագրումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

4. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագրում կատարված ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք գրավոր են և ստորագրված Կողմերի կողմից:

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	*Կատարող՝*
ք.Երևան, Նորք, Հովսեփյան 95	*Անձնագիր AR0691043, տրված 17.05.2018*
Ամերիաբանկ ՓԲԸ	*032-ի կողմից*
Հ/հ 15700276099710100	*Սյունիքի մարզ, Գորիս, գ. Շուռնուխ 2փ.16 տուն*
ՀՎՀՀ 01501898	*ՀՇՀ 1605910147*
Գլխավոր տնօրեն	
Մ.Միլիտոնյան	*Գ.Հակոբյան*

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
«ՀՀՌՑ» ՓԲ ընկերության
գլխավոր տնօրեն
Մ.Միլիտոնյան

ԱԿՏ

հանձնման-ընդունման

ք. Երևան 20 փետրվարի 2020 թ.

Մենք՝ ներքոստորագրյալներս, ‹‹ՀՀՌՑ›› ՓԲԸ Գորիս ՏԲ-ի պետ Արթուր Վարդանյանը, ՎՊԾ պետ Հովիկ Բաբայանը, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Գևորգ Հակոբյանը, մյուս կողմից, կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին.

Համաձայն 18.02.2020 թվականին կնքված աշխատանքների կատարման թիվ 2020/02/02 քաղաքացիա-իրավական պայմանագրի, 2020 թվականի փետրվարի 18-ից մինչև 20-ը Գ.Հակոբյանի կողմից իրեն պատկանող տրակտորով իրականացվել է ընկերության Գորիսի ՏԲ-ի Կատարիի հեռուստակայանի մերձատար ճանապարհի անցանելիության ապահովում:

Աշխատանքները կատարվել են ժամանակին և որակով,որի համար ստորագրում ենք:

Ընդունող Հանձնող

Արթուր Վարդանյան Գևորգ Հակոբյան

Հովիկ Բաբայան